30 մայիսի 2024թ.

Թիվ 01/1 - 86

Հաշվետվություն 02

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկի նախագահ
Մարտին Գալստյանին

Հարգելի պարոն Գալստյան,

Համաձայն «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» ՀՀ Կենտրոնական բանկի Կանոնակարգ 4/04 գլուխ 23-ի, կից ներկայացնում ենք էական փաստերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Առդիր՝ 3 թերթ

Հարգանքով՝

Գլխավոր գործադիր տնօրեն Հակոբ Անդրեասյան

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ / "ACBA BANK" OJSC
Կենտրոնական գրասենյակ
Head Office

+374 10 31 88 88
acba@acba.am
www.acba.am

ՀՀ, Երևան, 0002, Արամի 82-84
82-84 Aram st., Yerevan, 0002, RA

Էական փաստեր և տեղեկություններ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի 2024 թվականի տարեկան ընդհանուր ժողովի որոշումների վերաբերյալ:

Տեղեկացնում ենք, որ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ նաև՝ Բանկ) բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը (այսուհետ նաև՝ Ընդհանուր ժողով) գումարվել է 2024 թվականի մայիսի 14-ին, ժամը 15:00-ին, «ՖՈՒԴՊԱՐԿ ԲԱՅ ԴԱՈՒՆԹԱՈՒՆ» ("FOODPARK BY DOWNTOWN") կենտրոնում (հասցե՝ ՀՀ, 0002, ք.Երևան, Իսակովի 11), սահմանափակ թվով բաժնետերերի ֆիզիկական ներկայությամբ: Ֆիզիկապես չներկայացած բաժնետերերը հնարավորություն են ունեցել մասնակցել տարեկան ընդհանուր ժողովին տեսակապով և քվեարկել առցանց եղանակով կամ քվեաթերթիկի միջոցով:

Ընդհանուր ժողովի կողմից քննարկվել և կայացվել են հետևյալ որոշումները.

1. Բանկի 2023թ. տարեկան շահույթը բաշխելու մասին.

Որոշվել է Բանկի 2023թ. գործունեության արդյունքում ձևավորված զուտ շահույթից Բանկի բաժնետերերին վճարել ընդհանուր 5,500,000,000 (հինգ միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ՝ որպես տարեկան շահութաբաժիններ: Այս բաշխումը նախատեսում է մեկ բաժնետոմսի դիմաց 1,000 դրամ շահութաբաժնի վճարում, որը նախորդ տարվա համեմատ ընդհանուր բաշխված շահույթից 1,1 մլրդ դրամով, իսկ մեկ բաժնետոմսի դիմաց՝ 200 դրամով ավելին է: Տարեկան շահութաբաժինների վճարումները կատարվել են 2024թ. մայիսի 21-ին, դրամական միանվագ փոխանցմամբ, «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա՝ 2024 թվականի ապրիլի 29-ի, ժամը 15:30-ի դրությամբ Բանկի մասնակիցների ռեեստրում ընդգրկված բաժնետերերին՝ կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցությանը համամասնորեն:

2. Բանկի լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ձևը հաստատելու մասին.

Որոշվել է Բանկի խորհրդի 2024թ. ապրիլի 18-ի թիվ 153-Բ.7 որոշմամբ հաստատված՝ մինչև 485,000 հատ լրացուցիչ հասարակ (սովորական) բաժնետոմսերի տեղաբաշխումն իրականացնել փակ բաժանորդագրությամբ:

3. **Բանկի գործող խորհրդի անդամների լիազորությունները դադարեցնելու և նոր անդամներ նշանակելու մասին.**

- *Ժողովի որոշմամբ դադարեցվել են Խորհրդի անդամներ Արմեն Մկրտչյանի և Հրաչ Սարգսյանի լիազորությունները:*
- *Բերնարդ դը Վիտն ընտրվել է Բանկի Խորհրդի անկախ անդամ:*
- *Գայանե Հայրապետյանն ընտրվել է Բանկի Խորհրդի անդամ ընտրելու:*

Սույնով տեղեկացնում ենք, որ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ «Գարաժ մոլ» մասնաճյուղի անվանումը և հասցեն փոխվել են: Մասնաճյուղը վերանվանվել է որպես «Աջափնյակ» մասնաճյուղ և ս.թ. հունիսի 3-ից կգործի ք.Երևան, Ֆուչիկի փողոց 1/1 շենք, 300 հասցեում: